



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

№ 919-Ա/Ք

«01 » 10 2012 թ.

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 2808 «ՀԱԳՈՒՍՏԻ ՄՈԴԵԼԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՆԱԽԱԳԾՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ «ՄՈԴԵԼԱՎՈՐՈՂ-ՆԱԽԱԳԾՈՂ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՆԵՐԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2010թ. մարտի 4-ի N 8 արձանագրային որոշման 14-րդ՝ «Հայաստանի Հանրապետությունում նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման մասնագիտությունների և որակավորումների՝ կարողությունների ձևավորմանը միտված պետական կրթական չափորոշիչների մշակման և ներդրման հայեցակարգին ու գործողությունների ցանկին հավանություն տալու մասին» կետը, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2012թ. օգոստոսի 10-ի «Նախնական և միջին մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների նախագծերի փորձաքննություն իրականացնող ոլորտային հանձնաժողովների անվանական կազմը հաստատելու մասին» N 777-Ա/Ք հրամանով հաստատված ոլորտային հանձնաժողովի փորձագիտական եզրակացությունը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել միջին մասնագիտական կրթության 2808 «Հագուստի մոդելավորում եվ նախագծում» մասնագիտության «Մոդելավորող-նախագծող» որակավորման պետական կրթական չափորոշիչը՝ համաձայն հավելվածի:

2. Նախարարության աշխատակազմի իրավաբանական վարչությանը /պետ՝ Վ.Բավեյան/, նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության վարչությանը /պետ՝

Ռ.Աբրահամյան/. սահմանված կարգով առաջարկություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունվարի 12-ի «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի մայիսի 18-ի N 242 որոշման մեջ փոփոխություն կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 73-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու համար:

3. Միջին մասնագիտական կրթության 2808 «Հագուստի մոդելավորում եվ նախագծում» մասնագիտության «Մոդելավորող-նախագծող» որակավորման պետական կրթական չափորոշիչը մեկ պարբերաշրջանի ընթացքում փորձարկման նպատակով ուսումնական հաստատություններում ներդնել 2013թ. սեպտեմբերի 1-ից:

4. Նախարարության աշխատակազմի նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության վարչությանը. մինչև 2012 թվականի դեկտեմբերի 30-ը հաստատման ներկայացնել այն ուսումնական հաստատությունների ցանկը, որոնցում փորձարկման նպատակով ներդրվելու է միջին մասնագիտական կրթության 2808 «Հագուստի մոդելավորում եվ նախագծում» մասնագիտության «Մոդելավորող-նախագծող» որակավորման պետական կրթական չափորոշիչը:

5. Կրթության ազգային ինստիտուտի տնօրենին /Ն. Ղուկասյան/. ապահովել չափորոշիչ փորձարկման ընթացքի վերաբերյալ ուսումնական հաստատություններից վերլուծական հաշվետվությունների ստացումը:

6. Հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել նախարարի տեղակալ Մ. Մկրտչյանին:



Ա. ԱՇՈՏՅԱՆ

Հավելված

ՀՀ կրթության և գիտության

նախարարի «_____» _____ 2012թ.

№ _____ հրամանի

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ

2808 «ՀԱԳՈՒՍՏԻ ՄՈԴԵԼԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՆԱԽԱԳԾՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ

ԳԼՈՒԽ 1.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն չափորոշիչը սահմանում է միջին մասնագիտական կրթության 2808 «Հագուստի մոդելավորում և նախագծում» մասնագիտության՝ Հայաստանի Հանրապետության կրթության որակավորումների ազգային շրջանակի 5-րդ մակարդակի «Մոդելավորող-նախագծող» որակավորմանը ներկայացվող պահանջները, հիմնական կրթական ծրագրի բովանդակության պարտադիր նվազագույնը, ուսանողների ուսումնական բեռնվածության նվազագույն և առավելագույն ծավալները:

2. Միջին մասնագիտական կրթության 2808 «Հագուստի մոդելավորում և նախագծում» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը կարող է իրականացվել ուսուցման հետևյալ ձևերով՝

- 1) առկա
- 2) հեռակա
- 3) դրսեկություն (էքստեռնատ)
- 4) հեռավար (դիստանցիոն)

3. Միջին մասնագիտական կրթության 2808 «Հագուստի մոդելավորում և նախագծում» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի իրականացման համար սահմանվում են ուսումնառության հետևյալ նորմատիվային ժամկետները.

- 1) Կրթության առկա ձևով.
 - ա. միջնակարգ կրթության հիմքով՝ 3 տարի
 - բ. հիմնական կրթության հիմքով՝ 4 տարի

2) Կրթության հեռակա ձևով.

միջնակարգ կրթության հիմքով՝ 4 տարի

3) Դրսեկության (էքստեռնատ) և հեռավար (դիստանցիոն) ձևերով.

Դրսեկության (էքստեռնատ) և հեռավար (դիստանցիոն) ձևերով կրթության հիմքը և ուսուցման տևողությունը որոշում է ուսումնական հաստատությունը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թ. սեպտեմբերի 6-ի «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական հիմնական կրթական ծրագրերի հեռավար (դիստանցիոն) և դրսեկությամբ (էքստեռնատով) ուսուցման կարգերը հաստատելու մասին» N 1028-Ն որոշման:

4. Միջին մասնագիտական կրթության 2808 «Հագուստի մոդելավորում և նախագծում» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը միջնակարգ կրթության հիմքով յուրացնող ուսանողի ուսումնական բեռնվածության նվազագույն ծավալը 4068 ժամ է, առավելագույն ծավալը՝ 6642 ժամ: Հիմնական կրթության հիմքով հիմնական կրթական ծրագրի յուրացման դեպքում ուսումնառության տևողությունն ավելանում է 52 շաբաթով:

ԳԼՈՒԽ 2.

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 2808 «ՀԱԳՈՒՍՏԻ ՄՈԴԵԼԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՆԱԽԱԳԾՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

5. Միջին մասնագիտական կրթության 2808 «Հագուստի մոդելավորում և նախագծում» մասնագիտության մասնագետի մասնագիտական գործունեության բնութագիրը տրվում է ըստ զբաղմունքների տեսակների և մասնագիտական պարտականությունների:

6. Միջին մասնագիտական կրթության 2808 «Հագուստի մոդելավորում և նախագծում» մասնագիտությամբ մասնագետն իրականացնում է հետևյալ զբաղմունքները՝

1) թեթև արդյունաբերության տարբեր կազմակերպաիրավական կազմակերպություններում որպես մոդելյոր-նախագծող,

2) տարբեր կազմակերպաիրավական կարգավիճակով կազմակերպություններում՝ նորաձևության, դիզայնի կենտրոններում, որպես մոդելյոր-ձևավորող, մոդայի ուղղություններին համապատասխան կարի արտադրատեսակների փորձնական նմուշների ստեղծող,

3) անհատական պատվերների սրահներում որպես մոդելյոր-հրահանգիչ-նախագծող,

4) ձեռնարկատիրական գործունեության կազմակերպում՝ անհատական և ընտանեկան պատվերների, հանդիսությունների սրահների գեղարվեստական ձևավորման և հարդարման աշխատանքների գծով աշխատակից,

7. Միջին մասնագիտական կրթության 2808 «Հագուստի մոդելավորում և նախագծում» մասնագիտությամբ մասնագետի մասնագիտական պարտականություններն են.

1) թեթև արդյունաբերության տարբեր կազմակերպահրավական կազմակերպություններում հագուստի մոդելավորում-նախագծում,

2) մշակվող արտադրատեսակների տեխնիկական փաստաթղթերով նախատեսված պահանջների կատարման վերահսկում,

3) նախապատրաստական արտադրամասում փորձնական խմբաքանակների համար ձևոնների մշակում և պատրաստում,

4) թողարկվող արտադրատեսակների նորմատիվային փաստաթղթերում անհրաժեշտ շտկումներ և լրացումների կատարում,

5) արտադրատեսակների տեխնիկատնտեսագիտական հիմնավորման հաշվարկների կատարում,

6) անհատական պատվերների սրահներում, նորաձևության կենտրոններում ընտրել արտադրատեսակների պատրաստման համար անհրաժեշտ գործվածքներ և նյութեր՝ հաշվի առնելով մոդայի ուղղությունները և նմուշի տնտեսական նպատակահարմարությունը,

7) փորձանմուշների նախագծման, պատրաստման և վերջնամշակման ընթացքում իրականացնել հեղինակային վերահսկողություն,

8) հագուստի ավտոմատացված նախագծման համակարգերի կիրառում՝ զանգվածային, փոքր և հատային արտադրություններում,

9) համացանցի և համակարգչային ծրագրերի օգտագործում՝ գովազդի և հաճախորդներին նորաձևության նորոյթներին հաղորդակից դարձնելու նպատակով:

ԳԼՈՒԽ 3.

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 2808 «ՀԱԳՈՒՍՏԻ ՄՈԴԵԼԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՆԱԽԱԳԾՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

8. Միջին մասնագիտական կրթության 2808 «Հագուստի մոդելավորում և նախագծում» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի նկատմամբ ընդհանուր պահանջները սահմանվում են շրջանավարտին ներկայացվող ընդհանուր պահանջների համաձայն:

9. Միջին մասնագիտական կրթության 2808 «Հագուստի մոդելավորում և նախագծում» մասնագիտության հիմնական կրթական ծրագրով շրջանավարտը պետք է՝

1) ունենա մասնագիտական գործունեության տվյալ բնագավառում իր մասնագիտական դերին անհրաժեշտ կարողությունները ձևավորելու համար պահանջվող տեսական ու գործնական գիտելիքներ,

2) դրսևորի աշխատանքային և մասնագիտական պարտականությունները կատարելու ընթացքում գործընկերների և ղեկավարների հետ հաղորդակցվելու, մասնագիտական և ընդհանուր բնույթի հարցեր ներկայացնելու, դրանք պարզաբանելու կարողություն,

3) ունենա որոշակի փոփոխվող իրավիճակներում առաջացած խնդիրներին մասնագիտական տիպային և այլընտրանքային լուծումներ առաջարկելու կարողություն,

4) դրսևորի մասնագիտական խնդիրների լուծման համար անհրաժեշտ փաստերը և տեղեկատվությունը համադրելու և ամբողջության մեջ դիտարկելու, ինչպես նաև քաղաքացիական գիտակցություն ցուցաբերելու կարողություն,

5) ունենա մասնագիտական գործունեության գործառույթները սահմանված նորմերին համապատասխան իրականացնելու հմտություններ,

6) ցուցաբերի իր և աշխատակիցների (առկայության դեպքում) մասնագիտական կարիքները գնահատելու և դրանց կարգավորման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու կարողություն,

7) ունենա մասնագիտական կարողությունների պարբերաբար կատարելագործման ձգտում և ինքնուսուցման կարողություն,

8) ցուցաբերի մասնագիտական և ընդհանուր բնույթի անհրաժեշտ տեղեկատվություն փնտրելու, դրանցից օգտվելու և դրանք նպատակային օգտագործելու կամ փոխանցելու կարողություն,

9) ունենա աշխատակիցների (առկայության դեպքում) աշխատանքները կազմակերպելու կամ գործընկերային հարաբերությունները (լիազորության դեպքում) ըստ կարողությունների և մասնագիտացման համակարգելու հմտություններ,

10) ընթացիկ մասնագիտական խնդիրների լուծման ժամանակ ցուցաբերի ռազմավարական մոտեցումների տարրեր կիրառելու կարողություն:

ԳԼՈՒԽ 4.

2808 «ՀԱԳՈՒՍՏԻ ՄՈԴԵԼԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՆԱԽԱԳԾՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՆՎԱԶԱԳՈՒՅՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

10. Միջին մասնագիտական կրթության 2808 «Հագուստի մոդելավորում և նախագծում» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի բովանդակության պարտադիր նվազագույնի նկատմամբ պահանջները սահմանվում են ընդհանուր հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և ընդհանուր բնագիտական գիտելիքների,

առանցքային հմտությունների, ընդհանուր և հատուկ մասնագիտական կարողությունների բնագավառում շրջանավարտին ներկայացվող պահանջների համաձայն:

11. Միջին մասնագիտական կրթության 2808 «Հագուստի մոդելավորում և նախագծում» մասնագիտության հիմնական կրթական ծրագրով շրջանավարտը ընդհանուր հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և ընդհանուր բնագիտական գիտելիքների բնագավառում պետք է՝

1) իմանա ՀՀ Սահմանադրության, զբաղվածության տվյալ բնագավառը կարգավորող հիմնական նորմատիվ ակտերի, մարդու և հասարակության, քաղաքացիների միջև հարաբերությունները կարգավորող օրենքների և նորմատիվ փաստաթղթերի հիմնական դրույթները,

2) տիրապետի հայոց լեզվին,

3) հաղորդակցվի առնվազն երկու օտար լեզուներով,

4) տիրապետի առողջ կենսակերպ վարելու, հիգիենայի և ֆիզիկական կուլտուրայի կանոններին,

5) գիտելիքներ ունենա ազգային և համաշխարհային պատմության և մշակույթի վերաբերյալ,

6) ունենա անձի և հասարակության զարգացման օրինաչափությունների, հասարակության սոցիալական կառուցվածքի, շարժումների, քաղաքականության սուբյեկտների, քաղաքական հարաբերությունների և գործընթացների վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ,

7) ցուցաբերի կիրառական տնտեսագիտության հիմնադրույթների, մասնագիտական գործունեության բնագավառի տնտեսական երևույթների և հարաբերությունների առանձնահատկությունների, մակրոտնտեսության և միկրոտնտեսության օրենքների, անցումային շրջանի տնտեսության առանձնահատկությունների իմացություն,

8) իմանա էկոլոգիական հիմնական հասկացությունների բովանդակությունը, բնապահպանական գլոբալ և տարածաշրջանային հիմնախնդիրների դրույթները,

9) պատկերացում ունենա արտակարգ իրավիճակների մասին, տիրապետի արտակարգ իրավիճակներում գործելու հիմնական սկզբունքներին և մոտեցումներին, տեղյակ լինի փրկարարական աշխատանքների կազմակերպման կառուցվածքին և ձևերին, օգտագործի անհատական պաշտպանության միջոցներ:

12. Միջին մասնագիտական կրթության 2808 «Հագուստի մոդելավորում և նախագծում» մասնագիտության հիմնական կրթական ծրագրով շրջանավարտը պետք է տիրապետի աղյուսակ 1-ում բերված մոդուլներով սահմանված առանցքային հմտություններին:

13. Միջին մասնագիտական կրթության 2808 «Հագուստի մոդելավորում և նախագծում» մասնագիտության հիմնական կրթական ծրագրով շրջանավարտը պետք է տիրապետի աղյուսակ 2-ում բերված մոդուլներով ըստ մասնագիտացումների սահմանված ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական կարողություններին:

ԳԼՈՒԽ 5.

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 2808 «ՀԱԳՈՒՍՏԻ ՄՈԴԵԼԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՆԱԽԱԳԾՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋՆԵՐ

14. Միջին մասնագիտական կրթության 2808 «Հագուստի մոդելավորում և նախագծում» մասնագիտության հիմնական կրթական ծրագիր իրականացնող հաստատության կադրային ապահովության և կադրային համապատասխանության նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) ուսումնական պարապմունքներ վարող դասախոսը պետք է ունենա դասընթացի բնույթին համապատասխանող միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթության որակավորում, կամ տվյալ մասնագիտական զբաղվածության բնագավառում աշխատանքային գործունեության փորձ՝ եթե տվյալ դասընթացի ուղղությամբ միջին կամ բարձրագույն կրթություն Հայաստանի Հանրապետությունում չի իրականացվում: Հատուկ մասնագիտական դասընթացները վարող դասախոսների համար մասնագիտական աշխատանքի փորձի առկայությունը ցանկալի է,

2) ուսումնական պրակտիկան վարող արտադրական ուսուցման վարպետը պետք է ունենա տվյալ մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքի փորձ և մասնագիտական կրթություն,

3) արտադրական և նախաավարտական պրակտիկաները վարում է մասնագիտական դասընթացի դասախոսը:

15. Միջին մասնագիտական կրթության 2808 «Հագուստի մոդելավորում և նախագծում» մասնագիտության հիմնական կրթական ծրագիր իրականացնող հաստատության ուսումնամեթոդական ապահովության նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) հաստատությունը պետք է ունենա մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված առարկաների և մոդուլների ծրագրային բովանդակությանը համապատասխանող ուսումնական, մեթոդական և տեղեկատվական նյութեր (գրադարանային ֆոնդ, տվյալների համակարգչային բազա և այլն), գնահատման և ատեստավորման նպատակով օգտագործվող նյութեր, ուսումնական գործընթացի արդյունավետ իրականացմանը նպաստող այլ նյութեր, ուղեցույցներ:

16. Միջին մասնագիտական կրթության 2808 «Հագուստի մոդելավորում և նախագծում» մասնագիտության հիմնական կրթական ծրագիր իրականացնող հաստատության նյութատեխնիկական ապահովության նկատմամբ պահանջները սահմանվում են ըստ ուսումնական կաբինետների, լաբորատորիաների, արհեստանոցների, սպորտային համալիրի:

Դրանց հագեցվածությունը որոշվում է ուսումնական ծրագրերի պահանջներին համապատասխան:

1) *Ուսումնական կաբինետների երաշխավորվող ցանկը՝*

ա. հայոց և օտար լեզուների, խոսքի, մշակույթի, կրոնի և հայոց պատմության,

բ. ընդհանուր բնագիտական,

գ. ընդհանուր և հատուկ մասնագիտական,

դ. համակարգչային,

ե. գծագրության,

զ. անվտանգության և առաջին օգնության:

2) *Ուսումնական լաբորատորիաների երաշխավորվող ցանկը՝*

ա. էկոլոգիայի և աշխատանքի պաշտպանության

բ. նյութերի փորձարկման

գ. համակարգչային

3) *Ուսումնական արհեստանոցներ՝*

ա. կարածոների տեխնոլոգիայի

4) *Սպորտային համալիր՝*

ա. մարզադահլիճ

բ. մարզահրապարակ:

Կրթական ծրագիր իրականացնող հաստատությունը, ելնելով անհրաժեշտությունից, կարող է ձևավորել լրացուցիչ կաբինետներ, լաբորատորիաներ, արհեստանոցներ:

17. Միջին մասնագիտական կրթության 2808 «Հագուստի մոդելավորում և նախագծում» մասնագիտության հիմնական կրթական ծրագրով ուսումնական գործընթացի կազմակերպման նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) առկա ուսուցման ձևի համար ուսումնական տարվա սկիզբը սեպտեմբերի 1-ն է, իսկ հեռակա, դրսեկության (էքստենսատ) և հեռավար (դիստանցիոն) ձևերի համար սահմանվում է ուսումնական պլաններով,

2) ուսումնական յուրաքանչյուր տարվա տևողությունը սահմանվում է ուսումնական պլանով,

3) ուսանողի շաբաթական ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը չպետք է գերանզանցի 54 ժամը՝ ներառյալ լսարանային և արտալսարանային ուսումնական աշխատանքի բոլոր տեսակները,

4) ուսանողի ուսումնական բեռնվածության նվազագույն և պարտադիր պարապմունքների շաբաթական ծավալը չպետք է գերազանցի 36 ժամը՝ առանց նախասիրական առարկաների, խորհրդատվությունների և լրացուցիչ արտալսարանային պարապմունքների բեռնվածության,

5) հեռակա ուսուցման ձևի դեպքում ուսանողների հետ պարտադիր պարապմունքների տարեկան ծավալը առնվազն 160 ժամ է,

6) ուսումնական խմբի համար խորհրդատվության տարեկան ծավալը կազմում է մինչև 100 ժամը,

7) նախասիրական առարկաների ցանկը, դրանց ծավալը (առանձին դասացուցակով) և ուսուցման ժամկետները յուրաքանչյուր ուսումնական տարում որոշվում է հաշվի առնելով ուսանողների ընտրությունը:

18. Միջին մասնագիտական կրթության 2808 «Հագուստի մոդելավորում և նախագծում» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի պրակտիկաների կազմակերպման նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը ներառում է ուսումնական (տեսական ուսուցմամբ և/կամ առանց տեսական ուսուցման), արտադրական և նախաավարտական պրակտիկաներ,

2) պրակտիկայի յուրաքանչյուր տեսակի տևողությունը և տեսական պարապմունքների հետ հերթափոխությունը սույն չափորոշչով սահմանված պրակտիկայի ընդհանուր տևողությանը համապատասխան սահմանվում է մասնագիտության ուսումնական պլանով,

3) պրակտիկաների ուսումնական ծրագրերը կազմում և հաստատում է ուսումնական հաստատությունը.

4) ուսումնական պրակտիկաներն անցկացվում են պրակտիկայի ծրագրի կատարումն ապահովելու համար բավարար կահավորում և տեխնիկական հագեցում ունեցող ուսումնական արհեստանոցներում, ուսումնափորձական տեղամասերում, ուսումնական հաստատության այլ ուսումնաօժանդակ օբյեկտներում, ինչպես նաև կազմակերպություններում, հաստատություններում,

5) արտադրական և նախաավարտական պրակտիկաները, որպես կանոն, անց են կացվում պրակտիկաների ուսումնական ծրագրերի բովանդակությանը համապատասխան պայմաններ ունեցող կազմակերպություններում:

19. Միջին մասնագիտական կրթության 2808 «Հագուստի մոդելավորում և նախագծում» մասնագիտության ուսանողների ատեստավորումների նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) ուսումնառության ընթացքում բոլոր ուսանողները պարբերաբար ատեստավորվում են, որի նպատակը ըստ սույն չափորոշչով սահմանված կարողությունների տարրերի նրանց ձեռքբերումները հավաստող վկայություններ ստանալն է,

2) ուսումնական կիսամյակի սկզբում ուսանողը տեղեկացվում է կիսամյակի ընթացքում միջանկյալ ատեստավորման բնույթի, ժամկետների, անցկացման ձևի և ներառվող նյութի ծավալի մասին,

3) պետական ամփոփիչ ատեստավորումը երաշխավորվում է անց կացնել առանձին առարկաներից կամ մոդուլներից քննության, համալիր (միջառարկայական կամ միջմոդուլային) քննության կամ ավարտական (դիպլոմային) աշխատանք կատարելու և պաշտպանելու ձևով,

4) պետական ամփոփիչ ատեստավորման ընտրված ձևը և ներառվող նյութի ծավալը պետք է հնարավորություն տա ստուգել շրջանավարտի մասնագիտական կարողությունների և հմտությունների համապատասխանությունը սույն չափորոշչով 2808 «Հագուստի մոդելավորում և նախագծում» մասնագիտության «Մոդելավորող-նախագծող» որակավորկան մասնագետի համար սահմանված պահանջներին:

ԳԼՈՒԽ 6.

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 2808 «ՀԱԳՈՒՍՏԻ ՄՈԴԵԼԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՆԱԽԱԳԾՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄՈԴՈՒԼԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԸ

20. Միջին մասնագիտական կրթության 2808 «Հագուստի մոդելավորում և նախագծում» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրն իրականացնելու համար հաստատությունը կազմում և հաստատում է առանց-քային հմտությունների, ընդհանուր և հատուկ մասնագիտական մոդուլների, ընտրովի դասընթացի ուսումնական ծրագրերը, կրթության կառավարման պետական լիազորված մարմնի երաշխավորած ձևին համապատասխան ուսումնական պլանը՝ հաշվի առնելով 3-րդ աղյուսակում բերված օրինակելի ուսումնական պլանը:

21. Միջին մասնագիտական կրթության 2808 «Հագուստի մոդելավորում և նախագծում» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրն իրականացնող հաստատությունը սույն չափորոշչի հիման վրա մոդուլային ուսումնական ծրագրերը և ուսումնական պլանը կազմելու ժամանակ՝

1) կարող է փոփոխել դասընթացների և մոդուլների ժամաքանակը՝ պահպանելով մասնագետի (շրջանավարտի) կարողություններին և հմտություններին ներկայացվող պահանջները,

2) պետք է մոդուլների արդյունքներին և դրանց կատարման չափանիշներին համապատասխան ուսումնական ծրագրերը մշակելիս հաշվի առնի գործատուների, գործադիր իշխանությունների, մասնագիտական ոլորտը կառավարող պետական լիազորված մարմինների, այլ շահագրգիռ սուբյեկտների (սոցիալական գործ-ընկերների) առաջարկությունները,

3) պետք է առարկայի և/կամ/ մոդուլի ընդհանուր ժամաքանակի սահմաններում որոշի տեսական, գործնական և լաբորատոր պարապմունքների ժամաքանակները,

4) պետք է միջանկյալ ատեստավորման ընդհանուր շաբաթների սահմաններում որոշի ըստ կիսամյակների տվյալ ատեստավորմանը հատկացվող ժամանակը,

5) պետք է մասնագիտության նկարագրին համապատասխան տվյալ որակավորման ամբողջացման անհրաժեշտությունը և առանձնահատկությունը հաշվի առնելով՝ կազմի և հաստատի ընտրովի դասընթացների ուսումնական ծրագրերը,

6) օգտվելով երաշխավորված ձևում տրված պարզաբանումներից՝ պետք է կազմի ուսումնական պլանի կիրառման պարզաբանումները,

7) պետք է պրակտիկայի համար նախատեսված շաբաթների սահմաններում որոշի ուսումնական և արտադրական պրակտիկաների տևողությունները, անցկացման ժամկետները, նախաավարտական պրակտի-կայի տևողությունը,

8) պետք է սույն չափորոշչով երաշխավորված ամփոփիչ ատեստավորման ձևերին համապատասխան ընտրի ամփոփիչ ատեստավորման ձևը:

Միջին մասնագիտական կրթության 2808 <<Հագուստի մոդելավորում և նախագծում>> մասնագիտության հիմնական կրթական ծրագրի առանցքային հմտությունների մոդուլներ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՄԱԿԱՐԳԶԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»		
1	Մոդուլի դասիչը	ԱՀ-ՀՕՀ-5-12-001
2	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է զարգացնել սովորողի համակարգչային տեխնիկայից օգտվելու և աշխատանքային գործունեության ընթացքում դրա ծրագրային հնարավորությունները տեքստային և թվաաղյուսակային փաստաթղթերի պատրաստման, խմբագրման, դրանց ֆորմատավորման ու ձևավորման, ինչպես նաև փաստաթղթերի պահպանման ու տպագրման ընթացքում կիրառելու և համացանցում աշխատելու տարրական հմտություններ:
3	Մոդուլի տևողությունը	72 ժամ:
4	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
5	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
6	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել WORD ծրագիրը (հիմնական տեղեկություններ):
7	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) իմանալ Microsoft Word ծրագրի պատուհանի կառուցվածքը, 2) բացել նոր փաստաթուղթ, 3) ստեղնաշարի օգնությամբ մուտքագրել տեքստ, մեծատառ նշաններ, սիմվոլներ, թվանշաններ, 4) տեղաշարժել տեքստային ցուցիչը տեքստի մեջ, 5) կատարել տարրական ուղղումներ տեքստում, 6) փակել փաստաթուղթը, 7) բացել առկա փաստաթուղթը, 8) իմանալ Zoom գործիքի հնարավորությունները:
8	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել EXCEL ծրագիրը (հիմնական տեղեկություններ):
9	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) իմանալ Microsoft Excel ծրագրի պատուհանի կառուցվածքը, 2) բացել նոր փաստաթուղթ, 3) ստեղնաշարի օգնությամբ մուտքագրել տեքստ, թվային արժեքներ և

		<p>պարզ գործողություններ, մեծատառ նշաններ,</p> <p>4) ներկայացնել տվյալները աղյուսակի տեսքով,</p> <p>5) ներկայացնել տվյալները գրաֆիկական տեսքով,</p> <p>6) կատարել առանցքների և գրաֆիկների մակագրությունը,</p> <p>7) փակել փաստաթուղթը,</p> <p>8) բացել առկա փաստաթուղթը:</p>
10	Ուսումնառության արդյունք 3	Տեքստերի տարրական ֆորմատավորում:
11	Կատարման չափանիշներ	<p>1) պատրաստել Word ծրագիրը հայերեն և օտար լեզվով տեքստ մուտքագրելու համար,</p> <p>2) նշել բառերը և տեքստային հատվածները,</p> <p>3) կատարել մուտքագրված տեքստի պարզագույն ֆորմատավորում,</p> <p>4) կատարել տողերի հավասարեցում,</p> <p>5) փոխել միջտողային տարածությունները,</p> <p>6) փոխել տեքստի գույնը.</p> <p>7) փոխել տեքստի գունային ֆոնը,</p> <p>8) փոխել պարբերության խորությունները լուսանցքներից,</p> <p>9) չեղյալ հայտարարել (հրաժարվել) ֆորմատավորման կատարված գործողությունները,</p> <p>10) վերականգնել ֆորմատավորման չեղյալ հայտարարված գործողությունները,</p> <p>11) կրկնել ֆորմատավորման վերջին գործողությունը,</p> <p>12) փոխել լուսանցքների խորությունները, ընտրել էջի ուղղաձիգ կամ հորիզոնական դիրքերը, ընտրել թղթի չափերը,</p> <p>13) պատճենել տեքստը,</p> <p>14) տեղափոխել տեքստը,</p> <p>15) տողադարձել տեքստը,</p> <p>16) համարակալել էջերը:</p>
13	Ուսումնառության արդյունք 4	Փաստաթղթի պահպանում:
14	Կատարման չափանիշներ	<p>1) իմանալ փաստաթղթերի դասակարգման և պահպանման տեխնոլոգիաները,</p> <p>2) պահպանել նոր ստեղծված փաստաթուղթը,</p> <p>3) պահպանել փաստաթղթում կատարված ընթացիկ</p> <p>4) ֆորմատավորումները և փոփոխությունները:</p>
15	Ուսումնառության արդյունք 5	Աղյուսակների պատրաստում և խմբագրում:

16	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) պատրաստել աղյուսակ, 2) աղյուսակի մեջ մուտքագրել տեքստ, 3) կատարել ուղղումներ ու լրացումներ աղյուսակի մեջ, 4) ավելացնել նոր տողեր և նոր սյունակներ աղյուսակի մեջ, 5) ջնջել աղյուսակի տողերը և սյունակերը, 6) փոխել սյունակի լայնությունը «Մկնիկի» օգնությամբ, 7) փոխել տողի բարձրությունը «Մկնիկի» օգնությամբ, 8) փոխել աղյուսակի գծերի գույնը, 9) գունավորել աղյուսակի տողը և սյունը:
17	Ուսումնառության արդյունք 6	Գրաֆիկական խմբագրում և նկարազարդում:
18	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) գծագրել գրաֆիկական օբյեկտներ, 2) գծագրել գրաֆիկական օբյեկտներ՝ օգտագործելով Autosshapes պատուհանի պատրաստի ձևերը, 3) գծագրել կանոնավոր պատկերներ, 4) ֆորմատավորել գրաֆիկական օբյեկտները՝ տեղափոխելով, պատճենելով, պտտելով, շրջելով, չափերը փոխելով, 5) խմբավորել գրաֆիկական օբյեկտները, 6) հավասարեցնել գրաֆիկական օբյեկտները իրար նկատմամբ, 7) գծագրել տեքստային բլոկներ, 8) գունավորել գրաֆիկական օբյեկտները, 9) երանգավորել գրաֆիկական օբյեկտները, 10) ստվերավորել գրաֆիկական օբյեկտները:
19	Ուսումնառության արդյունք 7	Փաստաթղթի տպագրում:
20	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) նախադիտման ռեժիմում թերթել փաստաթուղթը, 2) իմանալ Print պատուհանի ֆունկցիաները, 3) տպագրել փաստաթուղթը:
21	Ուսումնառության արդյունք 8	Համացանցում (Ինտերնետում) աշխատելու իմացություն:
22	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) իմանալ «Համացանց» (Ինտերնետ) հասկացության նշանակությունը, 2) ճանաչել Internet Explorer, Google Chrome, Mozilla ծրագրերը, իմանալ դրանց նշանակությունը, 3) իմանալ Համացանցային (Ինտերնետային) Հասցե հասկացությունը, 4) իմանալ History հրամանի նշանակությունը, 5) իմանալ Favorites հրամանի նշանակությունը, 6) իմանալ Stop հրամանի նշանակությունը,

		<p>7) իմանալ Refresh հրամանի նշանակությունը,</p> <p>8) իմանալ Back և Forward կոճակների նշանակությունը,</p> <p>9) պատճենել տեքստային տեղեկատվությունը Համացանցային (Ինտերնետային) էջից,</p> <p>10) պատճենել գրաֆիկական տեղեկատվությունը Համացանցային (Ինտերնետային) էջից,</p> <p>11) իմանալ տեղեկատվության որոնման Համացանցային (Ինտերնետային) ծառայությունները,</p> <p>12) ըստ չափանիշների որոնել տեղեկատվությունը,</p> <p>13) ճիշտ օգտվել տեղեկատվության որոնման Համացանցային (Ինտերնետային) ծառայություններից,</p> <p>14) իմանալ էլեկտրոնային փոստի նշանակություն,</p> <p>15) ուղարկել և ստանալ էլեկտրոնային նամակներ:</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ		«ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»
23	Մոդուլի դասիչը	ԱՀ -ԱԳԸՀ -5-12-001
24	Մոդուլի նպատակը	Մոդուլը նպատակաուղղված է աշխատանքային հիմնական իրավահարաբերությունների մասին իրազեկվածության բարձրացմանը, աշխատանք փնտրելու և գտնելու նրա կարողությունների զարգացմանը, աշխատանքային գործունեության ընդհանուր կարողությունների և հմտությունների ձևավորմանը, ընթացիկ հաջողության հասնելու նախապայմանների ստեղծմանը, ինչպես նաև ցանկացած բնագավառում անհրաժեշտ աշխատանքային կուլտուրա և էթիկա դրսևորելու, ղեկավարի և գործընկերների հետ արդյունավետ հարաբերվելու կարողությունների, առաջացած աշխատանքային խնդիրներն ընկալելու և համապատասխան լուծումներ տալու կարողությունների ձևավորմանը:
25.	Մոդուլի տևողությունը	54 ժամ:
26	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
27	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
28	Ուսումնառության արդյունք 1	Փնտրել և գտնել աշխատանք:
29	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում աշխատանքային իրավահարաբերությունների

		<p>ձևավորման նախապայմանները,</p> <p>2) կարողանում է փնտրել առկա աշխատատեղերի բազան, ուսումնասիրել և ընտրել հավանական աշխատատեղը (երը)՝ օգտագործելով աշխատանքի որոնման ժամանակակից միջոցները և տեխնոլոգիաները,</p> <p>3) ճիշտ է կազմում գրավոր ինքնակենսագրություն (CV)</p> <p>4) ներկայացնում է իր մասնագիտական ուժեղ կողմերը և հիմնավորում իր թեկնածության համապատասխանությունը,</p> <p>5) ճիշտ է ներկայացնում աշխատանքի ընդունվելու, աշխատանքի փոփոխության և աշխատանքից ազատվելու հիմնական ընթացակարգերը:</p>
30	Ուսումնառության արդյունք 2	Հարմարվել աշխատանքային միջավայրին, ապահովել աշխատանքային դրական մթնոլորտ:
31	Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է ներկայացնում մասնագիտական գործունեության ոլորտում արտադրական միջավայրին ներկայացվող հիմնական պահանջները,</p> <p>2) ճիշտ է հիմնավորում տվյալ աշխատանքով զբաղվելու իր պատրաստակամությունը և տրամադրվածությունը,</p> <p>3) ճիշտ է ներկայացնում գործընկերների նկատմամբ հարգալից վերաբերմունքի և արդյունավետ հաղորդակցվելու օրինակները,</p> <p>4) առաջադրված իրավիճակում դրսևորում է պատրաստակամություն և պատասխանատվություն,</p> <p>5) ցուցաբերում է գործընկերոջը և ղեկավարին ուշադիր լսելու և հասկանալու կարողություններ:</p>
32	Ուսումնառության արդյունք 3	Արդյունավետ աշխատել թիմում՝ պահպանելով էթիկայի նորմերը:
33	Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է ներկայացնում կազմակերպության նպատակները և դրա իրականացման գործում թիմային աշխատանքի և միջանձնային հարաբերությունների կարևորությունը,</p> <p>2) ճիշտ է ներկայացնում թիմային աշխատանքի հիմնական սկզբունքները և խնդիրների լուծման մեթոդները,</p> <p>3) դրսևորում է հարգալից և պատշաճ վերաբերմունք գործընկերների նկատմամբ՝ ըստ նրանց վարքագծի դրսևորման,</p> <p>4) ճիշտ լուծումներ է առաջադրում գործընկերների շրջանում առաջացած խնդրահարույց իրավիճակներում,</p> <p>5) կարողանում է առանձին իրավիճակներում գերադասել թիմային</p>

		շահը անձնական շահից:
34	Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել աշխատանքում հաջողության հասնելու նախապայմանները:
35	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է բացատրում աշխատանքային կարգապահության և պատասխանատվության կարևորությունը աշխատանքային հաջողությունների հասնելու գործում, 2) ճիշտ է բացատրում մասնագիտական կարողությունների պարբերական կատարելագործման կարևորությունը աշխատանքային հաջողությունների հասնելու գործում, 3) ճիշտ է բացատրում նախաձեռնողականության և նպատակասլացության կարևորությունը աշխատանքային հաջողությունների հասնելու գործում, 4) ճիշտ է ներկայացնում աշխատանքային գործունեության ընթացքում ստորադասության և վերադասության հարաբերությունների պատշաճության կարևորությունը:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ»		
36	Մոդուլի դասիչը	ԱՀ-ԱԱՕ-5-12-001
37	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոնները պահպանելու, սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան կենցաղը և աշխատանքը կազմակերպելու, հավանական վտանգները և վթարները կանխարգելելու, արտադրական վթարների դեպքում՝ անվտանգության միջոցառումներ իրականացնելու և առաջին օգնություն ցուցաբերելու կարողություններ:
38	Մոդուլի տևողությունը	72 ժամ:
39	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
40	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
41	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոնները
42	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է բացատրում անվտանգության կանոնների սահմանման,

		<p>իրավական կարգավորման և պահպանման անհրաժեշտությունը,</p> <p>2) ըստ հիմնական բնագավառների ճիշտ է ներկայացնում անվտանգության կանոնների պահանջները,</p> <p>3) ճիշտ է ներկայացնում տեխնոլոգիական սարքավորումների շահագործման անվտանգության կանոնները,</p> <p>4) ճիշտ է ներկայացնում հրդեհային անվտանգության և հակահրդեհային պաշտպանության կանոնները,</p> <p>5) ճիշտ է ներկայացնում էլեկտրաանվտանգության կանոնները,</p> <p>6) ներկայացնում է անվտանգության կանոնների խախտման հետևանքները, պատասխանատվությունները:</p>
43	Ուսումնառության արդյունք 2	Կազմակերպել կենցաղը և աշխատանքը սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան
44	Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է մարդու առողջության և աշխատանքի ընթացքում աշխատունակության վրա ազդող գործոնները (սանիտարահիգիենիկ, հոգեբանաֆիզիոլոգիական, էսթետիկական, սոցիալական-հոգեբանական),</p> <p>2) ներկայացնում է աշխատավայրի սանիտարիայի և հիգիենայի ընդհանուր նորմերը (միկրոկլիման, ճառագայթումը, լուսավորվածությունը, տատանումները և այլն),</p> <p>3) ներկայացնում է աշխատանքի համար անհրաժեշտ նյութերը և դրանց անվնաս օգտագործումը,</p> <p>4) ներկայացնում է սանիտարիայի և հիգիենայի պահպանման համար անհրաժեշտ միջոցառումները:</p>
45	Ուսումնառության արդյունք 3	Կանխել հավանական վտանգները և վթարները, իրականացնել անվտանգության միջոցառումներ
46	Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է կենցաղային և արտադրական վթարների առաջացման պատճառները և հետևանքները,</p> <p>2) ներկայացնում է արտադրական վթարների կանխման աշխատանքները,</p> <p>3) ներկայացնում է առանձին խմբերի (հաշմանդամություն ունեցող անձինք, հղիներ, անչափահասներ և այլն) աշխատանքային առանձնահատուկ պայմանները և վտանգների կանխման սահմանված միջոցառումները,</p> <p>4) ներկայացնում է կենցաղային և արտադրական վթարների ու</p>

		դժբախտ պատահարների փաստաթղթային ձևակերպումների կարգը:
47	Ուսումնառության արդյունք 4	Ցուցաբերել առաջին օգնություն
48	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) տիրապետում է տարբեր իրավիճակներում առաջին օգնության հիմնական կանոններին, 2) առաջին օգնության գործողությունների քայլերը ճիշտ է ներկայացնում, 3) կատարում է արհեստական շնչառության և սրտի աշխատանքի վերականգնման գործողություն, 4) կատարում է արյան հոսքի դադարեցման և բաց վնասվածքների վիրակապման գործողություն, 5) կատարում է այրվածքների նախնական մշակման և էլեկտրահարվածին առաջին օգնություն ցուցաբերելու գործողություններ, 6) կատարում է վիրակապման և անշարժացման գործողություն՝ տարբեր կոտրվածքների դեպքում, 7) ներկայացնում է տարբեր թունավորման դեպքերում առաջին օգնության կազմակերպման գործողությունները:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՂՈՐԴԱԳՑՈՒԹՅՈՒՆ»		
49	Մոդուլի դասիչը	ԱՀ -Հ -5-12-001
50	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է զարգացնել սովորողի անձնական շփման ունակությունները, ակտիվացնել միջանձնային հաղորդակցության հնարավորությունները, ձևավորել աշխատանքային և մասնագիտական գործունեության ընթացքում նպատակային հաղորդակցման, գործնական կապերի ու հարաբերությունների ստեղծման կարողություններ:
51	Մոդուլի տևողությունը	54 ժամ:
52	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
53	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
54	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել հաղորդակցության դերն ու նշանակությունը անձնական և մասնագիտական նպատակների իրականացման համար:
55	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է բացատրում հաղորդակցման անհրաժեշտությունը անձի

		<p>ինքնադրսևորման և գործարար հաջողությունների հասնելու հարցում,</p> <p>2) ճիշտ է ներկայացնում շփման և անձնական հաղորդակցման ձևերն ու դրանց բաղադրիչները,</p> <p>3) ճիշտ է ներկայացնում գործնական հաղորդակցման եղանակներն ու դրանց բաղադրիչները,</p> <p>4) ճիշտ է կողմնորոշվում և իր շփման հնարավորությունը ուղղորդում է նպատակային հաղորդակցմանը,</p> <p>5) ճիշտ է կողմնորոշվում և իր անձնական հատկանիշներն օգտագործում է գործնական հաղորդակցության մեջ:</p>
56	Ուսումնառության արդյունք 2	Կիրառել ուղղակի հաղորդակցման ձևերը:
57	Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է ներկայացնում ուղղակի հաղորդակցման ձևերը,</p> <p>2) ճիշտ է կողմնորոշվում և բանավոր հաղորդակցման ժամանակ վարում է գրույց, արձագանքում է հարցադրումներին,</p> <p>3) ճիշտ է կողմնորոշվում և հանդես է գալիս հաղորդումներով և զեկույցներով՝ ներկայացնում է հստակ և նպատակային խոսք,</p> <p>4) ճիշտ է կողմնորոշվում և ուղղակի հաղորդակցման ընթացքում հայտնում է տեսակետ, դրսևորում է հետաքրքրություններ, հաճոյախոսում է,</p> <p>5) ճիշտ է կողմնորոշվում և մասնակցում է դեբատների և բանավեճերի, պահպանում է համագործակցության շարունակականությունը:</p>
58	Ուսումնառության արդյունք 3	Կիրառել անուղղակի հաղորդակցման ձևերը:
59	Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է ներկայացնում անուղղակի հաղորդակցման ձևերը,</p> <p>2) ճիշտ է կողմնորոշվում ու կազմում և ձևակերպում է գրավոր խոսք՝ պահպանելով նպատակայնությունն ու էթիկան,</p> <p>3) ճիշտ է կողմնորոշվում և օգտագործում է տեղեկատվական տեխնոլոգիաները և այլ տեխնիկական միջոցները՝ նպատակային տեղեկատվությունը փոխանցելու համար,</p> <p>4) ճիշտ է կողմնորոշվում և կազմում է գրություններ՝ ըստ հասցեատիրոջ և նպատակի,</p> <p>5) ճիշտ է կողմնորոշվում և վարում է տեղեկատվության հավաքագրման և փոխանցման փաստաթղթեր,</p> <p>6) ճիշտ է կողմնորոշվում և բանավոր հաղորդակցման նյութը փոխարկում է գրավորի,</p>

		7) ճիշտ է կողմնորոշվում և գրավոր հաղորդակցման նյութը փոխարկում է բանավոր հակիրճ նյութի:
60	Ուսումնառության արդյունք 4	Ձևավորել և զարգացնել միջանձնային հաղորդակցում:
61	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) նախաձեռնում է անձնական և աշխատանքային շփում՝ ըստ իրավիճակի և զրուցակցի կամ հաստատիրոջ, 2) ստանում, մշակում և դասակարգում է անհրաժեշտ (նպատակային) տեղեկատվությունը, 3) առկա տեղեկատվությունն օգտագործում է միջանձնային հաղորդակցում ձևավորելու համար, 4) օգտագործում է հաղորդակցման հնարքները և տեխնոլոգիաները՝ հետաքրքրություն առաջացնելու և շահադրդելու համար, 5) ներգրավվում է երկխոսություններում, քննարկումներում, հայտնում է կարծիք, հիմնավորում է տեսակետներ, 6) կարողանում է պահպանել կամ եզրափակել երկխոսությունը, 7) կարողանում է հաղորդակցվել՝ հաշվի առնելով իրավիճակը և ունկնդրի հետաքրքրությունները:
62	Ուսումնառության արդյունք 5	Խթանել համագործակցության ձևավորումը, ստեղծել նախապայմաններ շարունակական գործընկերության համար:
63	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է համագործակցությունը խթանող միջոցառումներ (գովազդ, հայտարարություններ, ցուցահանդեսներ և այլն), 2) հավանական գործընկերոջ վերաբերյալ հավաքագրում է անհրաժեշտ տեղեկատվություն, 3) հավաքագրված տեղեկատվությունն օգտագործում է գործարար հաղորդակցում ձևավորելու համար, 4) օգտագործում է հաղորդակցման հնարքները և տեխնոլոգիաները՝ հետաքրքրություն առաջացնելու և շահադրդելու համար, 5) հաղորդակցման ընթացքում ձեռք է բերում վստահություն, 6) ապահովում է հետադարձ կապի միջոցառումներ:

**Միջին մասնագիտական կրթության 2808 <<Հագուստի մոդելավորում և նախագծում>>
մասնագիտության հիմնական կրթական ծրագրի ընդհանուր մասնագիտական և հատուկ
մասնագիտական կարողությունների մոդուլներ**

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԱՂԱՓԱՐ ՀԱԳՈՒՍՏԻ ՄԱՍԻՆ»		
1.	Մոդուլի դասիչը	ՀՄՆ-5-12-001
2.	Մոդուլի նպատակը	Մոդուլը մշակվել է ուսանողների մոտ հագուստի նշանակության, տեսականու, ֆունկցիաների, դասակարգման մասին ընդհանուր գաղափար ձևավորելու, ինչպես նաև ծանոթացնելու հագուստին ներկայացվող սպառողական և արտադրական պահանջների հետ:
3.	Մոդուլի տևողությունը	36 ժամ
